ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 775-22

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «28» «12» 2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը՝ ի դեմս գլխավոր քարտուղար Կարեն Սարգսյանի (այսուհետ՝ Պետական մարմին), ով գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-Ը-ն՝ ի դեմս տնօրեն Կարեն Ղազարյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), ով գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2044-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), 1058 «Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի 11003 «Տնտեսական հետազոտություններ և վերլուծություններ» միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) շրջանակներում «Գիտության և գործարարության օրեր-2022» համաժողովի իրականացման նպատակով՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1 Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է «Գիտության և գործարարության օրեր-2022» համաժողովի (այսուհետ՝ Համաժողով) իրականացման նպատակով Պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով Կազմակերպությանը հատկացնել որոշման 1058 «Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի 11003 «Տնտեսական հետազոտություններ և վերլուծություններ» միջոցառմամբ նախատեսված 8, 100, 000 (ութ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ գումար (ներառյալ ԱԱՀ-ն), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Համաժողովն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Համաժողովի կազմակերպման նպատակով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ) ներկայացված են Պայմանագրի N 1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ և Պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Միջոցառման իրականացումը, կամ Միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Միջոցառմամբ նախատեսված առանձին Համաժողովի իրականացման ժամկետները (Համաժողովի իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Միջոցառմամբ սահմանված պահանջներին.

2.1.4. Պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3 Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Միջոցառմամբ նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել Միջոցառման (առանձին Միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Միջոցառմամբ նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված Միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Համաժողովը համապատասխանում է Միջոցառման և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել Միջոցառման շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Միջոցառմամբ և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Պայմանագրով սահմանված կարգով Պետական մարմին ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ձև Հ-2, Հ-4, Հ-8 և տեքստային) ամսեկան կամ եռամսյակային և/կամ տարեկան հաշվետվություններ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը, իսկ Միջոցառման ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն՝ համաձայն հավելված N 2-ի.

2.4.5.Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին Միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա դեկտեմբերի 23-ը:

2.4.9 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների տարեկան արդյունքներն ընդունվելուց հետո առաջացած տնտեսումները /խնայողությունները/ կազմակերպությունը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև դեկտեմբերի 30-ը:

2.4.10. Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարում ներառված ավելացված արժեքի հարկի գծով հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականին ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

3. Մոնիթորինգը

3.1 Պետական մարմինը Միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2 Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4 Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5 Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է Պետական մարմնի և Կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ: Մինչև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կազմակերպությունը Պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 4) և հաշվետվությունը:

4.2 Եթե իրականացված Միջոցառումը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պետական մարմինը Պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված Միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում Կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կազմակերպության նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե Պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պետական մարմինը չի ընդունում Պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա

իրականացված Միջոցառումը համարվում է ընդունված և Պայմանագրի 4.2 կետով սահման-ված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պետական մարմինը Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հաշվետու ամսվա փաստացի հաշվարկված ծախսերի վերաբերյալ մինչև հաջորդող ամսվա 5-ը ներկայացված ծախսերի կատարման հայտի և հաշվարկ-բացատրագրի (հավելված N 7), համապատասխան Ծրագրի ծախսերի նախահաշվի (հավելված N 6) և հանձնման-ընդունման ակտի (հավելված N 4) հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսների:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի NN 1 և 5 հավելվածներում նշված Ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում Կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները Պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված Միջոցառման կատարման ժամկետը խախտելու դեպքում Կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Միջոցառման իրականացման արդյունքում Կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5 Պետական մարմնի կողմից Պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պետական մարմնի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը: Պայմանագրի գործողությունը տարածվում է 2022թ. հունիսի 15-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագրի ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը (հավելված N 5):

9.2. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի

լուծելու մասին ծանուցումը Պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը Պետական մարմինն այն ուղարկում է նաև Կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.3. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.4. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակով՝ 18 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

9.5. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ
ք.Երևան, Մ. Մկրտչյան 5	Հասցե՝ ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի զբոսայգի, 1
Հ/Հ 900011001071	ՀՎՀՀ 00144572
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Բանկ՝ թիվ 1 տարածքային գանձապետական բաժին
ՀՎՀՀ 02698604	Հ/Հ 900018002825
Գլխավոր քարտուղար	տնօրեն
[redacted] Կ. Հարգսյան	Կ. Ղազարյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված 1
2022 թվականի ----------կնքված
N---------- պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (հազար դրամ)
գիտության և գործարարության օրեր-2022» համաժողովի իրականացում	«Գիտության և գործարարության օրեր-2022» համաժողովի կազմակերպման ապահովում	Համաժողովի իրականացման նպատակով դահլիճի ապահովում	Բիզնեսի և գիտության փոխգործակցության զարգացման, գիտության առևտրայնացման հնարավորությունների բացահայտման, ինչպես նաև դրանց շարունակական համագործակցության խթանում	30.12.2021	Գրավոր, համաձայն պայմանագրի հավելվածների	8100.0

Հավելված 2
-ին
պայմանագրի

2022 թ.
կնքված N

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ)

ի անվանում	
աշնորհի համար	
աշնորհատու կերպություն	
աշնորհառու կերպություն	
ի իրականացման ակահատված	
տու ժամանակահատված	
ացման օր	
տվության սխանատու (անուն, ուն, պաշտոն)	

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ)

գրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ ռում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարությունը կազմվում է հետևյալ բովանդակությամբ՝

1. Հայտարարատուի անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն (եթե կա), նույնականացման քարտի (անձնագրի) համարը, տրման ամսաթիվը, տրման վայրը, անձնագրի գործողության ժամկետը (եթե կա), ինչպես նաև հարկ դրամական միջոցներ ունենալու դեպքում՝ դրամական միջոցների մասին տեղեկատվությունը (գումարը, արժույթը, ֆինանսական կազմակերպությունը, հաշվեհամարը, հաշվի տեսակը, հաշվի բացման ամսաթիվը, հաշվի գործողության ժամկետը, հաշվի ներկայիս մնացորդը, հաշվի գրավադրման մասին տեղեկությունը, հաշվի գրավադրման ամսաթիվը, գրավադրման ժամկետը, գրավատուի անունը, ազգանունը, հայրանունը, գրավատուի նույնականացման քարտի (անձնագրի) համարը, գրավատուի հասցեն, գրավատուի հեռախոսահամարը, գրավատուի էլեկտրոնային հասցեն (եթե կա), գրավատուի հարկ դրամական միջոցներ ունենալու դեպքում՝ դրամական միջոցների մասին տեղեկատվությունը (գումարը, արժույթը, ֆինանսական կազմակերպությունը, հաշվեհամարը, հաշվի տեսակը, հաշվի բացման ամսաթիվը, հաշվի գործողության ժամկետը, հաշվի ներկայիս մնացորդը, հաշվի գրավադրման մասին տեղեկությունը, հաշվի գրավադրման ամսաթիվը, գրավադրման ժամկետը):

2. Հայտարարությունը ստորագրվում է հայտարարատուի կողմից:

Ես (անուն, ազգանուն) ստորագրելով հայտարարում եմ, որ տեղեկացել եմ Հանրային ծառայության մասին օրենքի 10-ի 1-ին մասի 1-ին կետի դրույթներին, ինչպես նաև ինձ հայտնի է, որ ինձ նկատմամբ հանրային ծառայության մասին օրենքի 10-ի 1-ին մասի 1-ին կետի դրույթների խախտումը հանդիսանում է կարգապահական հանցանք, որի համար ինձ կարող է նշանակվել կարգապահական տույժ:

Հավելված N 3
2022թ. _____ _____-ի կնքված
N_____ պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑԱ

ՀՀ հազար դրամ (աճողական)

Տնտեսական հետազոտություններ և վերլուծություններ միջոցառման															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												Ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեմբեր	դեկտեմբեր	
1		2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
		«Գիտության և գործարարության օրեր-2022» համաժողովի իրականացում												8,100.0	8,100.0

Պետական մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Հասցե՝

0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն

Հ/Հ 900011037935

ՀՎՀՀ 02698604

Գլխավոր գանձապետարան

ՀԱՐԵՆ ԱՍՐՅԱՆ

Կազմակերպություն

«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ

Հասցե՝

ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի զբոսայգի, 1

ՀՎՀՀ 00144572

Բանկ՝ թիվ 1 տարածքային գանձապետական բաժին

Հ/Հ 900018002825

տնօրեն՝

Կ. ՂԱՋԱՐՅԱՆ

L.S.

Հաստատում եմ

Նախարարի տեղակալ՝ Անի Իսպիրյան

Հավելված 4
-ին
պայմանագրի

2022 թ.
կնքված N

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն
Հ/Հ 900011037935
ՀՎՀՀ 02698604

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ
Հասցե՝
ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի զբոսայգի, 1
ՀՎՀՀ 00144572
Բանկ՝ թիվ 1 տարածքային գանձապետական բաժին
Հ/Հ 900018002825

ԱԿՏ №
ՊԱՅՄԱՆԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2022 թ.

Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » «հունվար» 2022 թ.
Պայմանագրի համարը՝
Պետական մարմինը և Կազմակերպությունը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված № _ _ _ _ _ հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանգրի շրջանակներում Կազմակերպությունը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

Իրականացված միջոցառման							
		արդյունքը		կատարման ժամկետը		վճարման ենթակա գումարը (հազ. ՀՀ դրամ)	վճարման ժամկետը (ըստ պայմանագրի)
անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց՝

ստորագրություն
Գևորգ Մուրադյան
անուն, ազգանուն

Ծառայությունն ընդունեց՝

ստորագրություն

անուն, ազգանուն

Հավելված N 5

2022թ. _____ _____ -ի կնքված

N_____ պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**

անվանումը՝ **«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ**

վանումը՝ **Տնտեսական հետազոտություններ և վերլուծություններ**

Նկարագրությունը	Միջոցառման ցուցանիշի անվանումը	Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի ընթացքում ընդ որում աճողական
		տարի
		քանակը
1	2	3
ության և գործարարության օրեր-2022» մաժողովի կազմակերպման ապահովում	*Ծրագրի շրջանակներում իրականացվող համաժողով, հատ*	1
	Համաժողովի մասնակիցների թիվը	1200

Պետական մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Հասցե՝

0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

Կենտրոնական գանձապետական գործառնական

գանձարան

Հ/Հ 90001[illegible]935

Գլխավոր գանձապետ

[illegible]

Կազմակերպություն

«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ

Հասցե՝

ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի զբոսայգի, 1

ՀԿՀՀ 00144572

Բանկ՝ թիվ 1 տարածքային գանձապետական բաժին

Հ/Հ 900018002825

տնօրեն

Հ. Զաքարյան

Հավելված N 6
2022թ. _____ _____-ի կնքված
N_____ պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

NN	Ծրագրի գծով իրականացվող ծախսերը (ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի)	Գումարը ՀՀ հազար դրամ
	Անվանումները	
Ա	Բ	Գ
	1 Գույք սարքավորումների վարձակալություն	**6,750.0**
	- տեղեկատվական հոլովակների ցուցադրման համար սարքավորումների վարձակալություն	3,416.7
	Տարածքի վարձակալում	3,333.3
	3.ԱՅԼ ԾԱԽՍԵՐ,այդ թվում՝	**1,350.0**
	Ավելացված արժեքի հարկ	1,350.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**8,100.0**

Պետական մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Հասցե՝

0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն

Հ/Հ 900011037935

ՀՎՀՀ 02698604

Գլխավոր ցուցուղար՝

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

M.P.

Կազմակերպություն

«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ

Հասցե՝

ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի զբոսայգի, 1

ՀՎՀՀ 00144572

Բանկ՝ թիվ 1 տարածքային գանձապետական բաժին

Հ/Հ 900018002825

տնօրեն

Կ. ՂԱՋԱՐՅԱՆ

M.P.

Հավելված N 7
2022 թվականի _____ կնքված
N_____
պայմանագրի

ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՅՏ N
ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____ _____
Կոդիֆիկացիայի անվանումը ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ

Բաժին 04 Խումբ 02 Դաս 01 Միջոցի 1 _____
ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ՍՄՍԱԳԻԼ

Դուրայ ԷԶՍՊՈ-2020 համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովում
(ծրագրի անվանումը)

ՀՀ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀՈԴՎԱԾ	ԳՈՒՄԱՐ
1			
Ընդամենը			

Առաջին կարգի ստորագրություն՝

Կ. Տ

Երկրորդ կարգի ստորագրություն՝

Ծանուցում՝ Սույն հայտը ուժի մեջ է պահանջվող ֆինանսավորման, սույն պայմանագրի N2 հավելվածով հաստատված ծրագրի կատարման ծախսերի նախահաշվին համապատասխան տրված հաշվարկ-բացատրագրի առկայության դեպքում